

դինէն, Երուսաղէմ կը զրկէր անձամբ հսկելու համար Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցիին շինութեան: Թէեւ այրին վրայ շինուած եկեղեցիին հսկողն էր Հեղինէ, բայց Եւսեբիոս, իր Ներքողեան Կոստանդիանոսի գիրքին մէջ, շինութեան գործը ամբողջովին կը վերագրէ Կոստանդիանոսի. սակայն Կոստանդիանոսի Կենսագրութեան գրուածքին մէջ, անսալով իր ճշմարիտ պատմագրի կոչումին, չ'ուզեր զանց ընել Հեղինէի մասնակցութիւնը Ս. Ծննդեան եկեղեցիի շինութեան մէջ: Կը թուի թէ թագուհին մասնաւոր բարեպաշտութիւն մը կը սնուցանէր նկատմամբ այրին, ուր Ս. Կոյսը ճաշակած էր աստուածային մայրութեան ուրախութիւնները: Հեղինէի նկատմամբ Եւսեբիոսի խօսքերը կը գնենք հոս. «Հեղինէ անմիջապէս երկու տաճարներ կանգնեց, մին Ս. Ծննդեան այրին վրայ, միւսն Համբարձման լերան վրայ»: Թագուհին պատշաճ գարդարանքներով օժտեց Ծննդեան այրը ու անոր վրայ նորոգ կառուցուած եկեղեցին, որ սկսած էր 326 ին դեռ գործը չէր աւարտած, 329ին, Հեղինէ արդէն վախճանած էր:

Մենք էթերիա ուխտաւորուհիին խօսքերէն դատելով կը դիտենք որ Բեթղեհէմի նորոգ շինուած եկեղեցին չունէր կառուցուածքի այն շքեղութիւնը, զոր ունէին միւս սրբավայրերը, ինչպէս որ կը շեշտէ Պորտոյի անանուն ուխտաւորը. երկուքն ալ սաղիմական նորակառոյց տաճարներու մասին կը շուային իրենց գովարանութիւնը. բայց Բեթղեհէմի եկեղեցին կը նկատեն սովորական տաճար մը, եւ կը գովարանեն միայն անոր ոսկոյ, արծաթի եւ դիպակի տօնական ճօխ զարդերը. սակայն ամենէն ճիշդ գաղափարը կու տայ նոյն եկեղեցիին կառուցուածքի մասին, վերջին տարիներս գտնուած Մատապոյի եկեղեցւոյն մոզայիք քարտէսը: Մատապո սուրբբրական քաղաք մ'է Անդր-Յորդանանու մէջ, և անոր եկեղեցւոյն մոզայիքը, որ հաւանաբար Զ. դարու գործ է, կը ներկայացնէ Երուսաղէմի յատկազիծը որ ճշգրտորէն ցոյց կու տայ Երուսաղէմի պարիսպները, փողոցները և զանազան եկեղեցիները, և կը դիտուի որ Գողգոթայի և այլ հոյակապ եկեղեցիներու հետ բաղդատելով Ս. Ծննդեան եկեղեցին սովորական շէնքով մը պատկերացուած է նոյն մոզայիք-քարտէսին վրայ: Երբ կը հաստատուի հնագոյն դարերու ուխտաւոր ուղեգիրներու ծանօթութիւնը զոր վերեւ մէջ բերինք: